

Սյունյաց երկիր

ՀՈՐԵՇՆԱԲԹԻ, 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018Թ.
№ 28 (486)

www.syuniacyerkir.am

*Թմբուկ են խփում,
հարսանիք է,
Հարսանիք է երկրում
աշնանային...*

Եղիշե Չաքեց



Որ արդյունավետ լինեն տեսչական սպուգումները

Հոկտեմբերի 27-ին Սյունիքի մարզպետարանի դահլիճում տեղի ունեցավ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեությունն ուսումնասիրելու նպատակով ստեղծվող աշխատանքային խմբի նախնական հանդիպումը, որին մասնակցում էին ազգակիր համայնքների ներկայացուցիչներ, բնապահպաններ, խնդրո առարկայով հետաքրքրված անձինք:

ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Արթուր Գրիգորյանը ներկայացրեց իրազեկեց, որ օրակարգում երկու հարց է ընդգրկված՝ Քաջարանի հանքավայրին առնչվող եւ ուսումնասիրման ենթակա հարցերի շրջանակի ուրվագծումը եւ այդ հարցերը հետազոտելու համար անհրաժեշտ նյութերի (թույլտվություններ, փորձաքննական եզրակացություններ եւ այլ եզրակացություններ) անվանանշումը, որոնք անհրաժեշտ է կարճ ժամանակում ձեռք բերել ու տրամադրել աշխատանքային խմբին:

Խնդրահարույց են մնում Արծվանիկ, Սեւաքար, Չափնի համայնքներին Արծվանիկի պաշտպանի հասցրած վնասների դիմաց փոխհատուցումները: Մասնավորապես, Չափնիի բնակիչ Արթուր Կոստանյանը, ով ներգրավված է Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեությունն ուսումնասիրելու նպատակով ստեղծվող աշխատանքային խմբում, նշեց, որ կառավարության 2015 թվականի մայիսի 21-ի N79 որոշման 5-րդ հավելվածով 59.1 հա տարածք Չափնիի վարչական տարածքից ճանաչվել է բացառիկ գերակա շահ եւ տրամադրվել Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին: 59.1 հա-ից փոխհատուցում է տրվել միայն 3.3 հեկտարի դիմաց: Պղնձարի ընդլայնման հետեւանքով գյուղին պատկանող ջրաղացներ են մնացել պղնձարի տակ, վերջինիս ծավալները մեծանալու հետ զուգընթաց նույն ճակատագիրը սպառնում է պատմական արժեք ներկայացնող ձիթահանին, որը եզակի է Կապանի տարածաշրջանում:

Հանդիպման ավարտին Ա. Գրիգորյանը մանրամասնեց, որ աշխատանքային խմբի գործունեության շրջանակում ընդգրկված է գործնականում յուրաքանչյուր հարց, որ կարող է առնչություն ունենալ կոմբինատի գործունեությանը՝ նրա սոցիալական պատասխանատվությանը, հարկային պարտավորություններին, հանքաքարի արդյունահանման ծավալներին եւ այլն:

Իսկ աշխատանքային խումբը որքանով է առնչվում Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում սեպտեմբերի 10-ից սկսված տեսչական ստուգումների հետ, «Սյունյաց երկիր» հարցին, Ա. Գրիգորյանը պատասխանեց. «Որտեղ տեսչական ստուգումներ ենք անում, զուգահեռաբար աշխատանքային խումբ ենք ձեւավորում, որի գործունեության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը կարող է նպաստել տեսչության գործունեության ավելի արդյունավետ իրականացնելուն»:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Ազգային ժողովն արձակված է իրավունքի ուժով

Ազգային ժողովը նոյեմբերի 1-ին ձայների 0 դեմ, 0 կողմ, 13 ձեռնպահ հարաբերակցությամբ Նիկոլ Փաշինյանին չընտրեց վարչապետ:

Քվեարկությունից ընտրված անց վարչապետի պաշտոնակատարը գրառում է կատարել իր ֆեյսբուքյան էջում՝ փաստելով. «Ազգային ժողովն արձակված է իրավունքի ուժով: Ընտրվում են»:

Լրագրողների հետ զրույցում նախընտրեց չմեկնաբանել խորհրդարանի արձակումը: Խորհրդարանն առաջին անգամ Փաշինյանին վարչապետ չընտրեց հոկտեմբերի 24-ին: Սահմանադրության համաձայն, Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով, եթե երկու անգամ վարչապետ չի ընտրվում: Հենց դա էր Փաշինյանի նպատակը: Հոկտեմբերի 16-ին նա հրաժարական տվեց երկրի վարչապետի

պաշտոնից, որպեսզի ղեկավարի սկզբին անցկացվեն խորհրդարանական արտահերթ ընտրություններ:

Փաշինյանի խոսքով՝ պայմանավորվածությամբ կա, որ արտահերթ ընտրությունները տեղի կունենան ղեկավարների 9-ին:

Վարչապետի պաշտոնակատարը, ի պատասխան «Ազատության» հարցին ասաց,

էջ 2

Ղեկավարների 9-ին՝ ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություն

**Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը
Ազգային ժողովի արտահերթ ընտրությունն նշանակելու մասին**

Հիմք ընդունելով Սահմանադրության 92-րդ և 93-րդ հոդվածների պահանջները եւ հաշվի առնելով Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Ազգային ժողովի իրավունքի ուժով արձակումը.

1. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունը նշանակել 2018 թվականի դեկտեմբերի 9-ին:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում

պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Ա.ՍԱՐԳՍՅԱՆ
2018թ. նոյեմբերի 1
Երևան
ՆՂ-475-Ն**

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նոյեմբերի 2-ին հաստատել է հանրապետության նախագահի հրամանագրով 2018թ. դեկտեմբերի 9-ին նշանակված Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության կողմից ըստ ընտրա-

կան տարածքների ընտրողների թվի վերաբերյալ տրամադրված տվյալները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշմամբ սահմանել է Ազգային ժողովի ընտրություններին յուրաքանչյուր ընտրական տարածքում կուսակցության, կուսակցությունների դաշինքի տարածքային ընտրական ցուցակում ընդգրկվող թեկնածուների առավելագույն թիվը:



Արա Բաբլոյանն ուղերձ է հղել Ազգային ժողովի արձակման կապակցությամբ



Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանն ուղերձ է հղել խորհրդարանի արձակման կապակցությամբ: Ինչպես տեղեկացրին 33 Ազգային ժողովի լրատվության և հանրության հետ կապերի վարչությունից, ուղերձում, մնասնավորապես, ասված է.

«Սիրելի՛ հայրենակիցներ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վեցերորդ գումարման հարգելի՛ պատգամավորներ, Ազգային ժողովի աշխատակիցներ,

խորհրդարանը վարչապետի հրաժարականից եւ երկու անգամ վարչապետ չընտրվելուց հետո իրավունքի ուժով սկսում է իր լիազորությունների դադարեցման գործընթացը: Համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության՝ ներկա խորհրդարանը կգործի մինչև յոթերորդ գումարման Ազգային ժողովի առաջին նիստը:

Այնուհայտ է, որ Ազգային ժողովի վեցերորդ գումարման պատգամավորական կազմն առանձնացավ իր խոհեմությամբ ու համդուր-ժողականությամբ: Դա մեր գործընկերների բարձր պրոֆեսիոնալիզմի, քաղաքական

կամքի ու իմաստության արդյունքն էր: Անցած մեկուկես տարին լրիվ բավական էր համոզվելու համար, որ մեր պատգամավորներն ունեն սեփական դիմագիծ եւ ցանկացած խնդրում մինչև վերջ պաշտպանում են իրենց քաղաքական դիրքորոշումը: Բայց դժվարին պահերին, որոնք անցած ամիսներին քիչ չէին, հաճախ մի կողմ թողնելով կուսակցական շահերն ու տեսակետները՝ բոլորը համախմբվեցին Հայաստանում ու Արցախում կայունության պահպանման գաղափարի շուրջ եւ երկիրը չտարան նորանոր ցնցումների:

Ուստի, շնորհակալություն եմ հայտնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բոլոր պատգամավորներին՝ նման բարձր գիտակցություն ցուցաբերելու համար: Եւ, միաժամանակ, առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում հատկապես այն պատգամավորներին, ովքեր անկախ հին ու նոր իրողություններից այս ամեն օր փոփոխվող ժամանակներում չդավաճանեցին իրենց սկզբունքներին եւ որոշումներ ընդունելիս առաջնորդվեցին իրենց խղճի ու ներքին համոզմունքների թելադրանքով: Դրա շնորհիվ էլ այս ամիսներին պահպանվեց ամենակարևորը՝ ներքին ու արտաքին գործընթացների կամխառնեցիկությունը, ինչը թույլ տվեց երկրին, ժողովրդին ու բանակը հետ պահել մեծամեծ փորձություններից:

Սիրելի բարեկամներ, 2017 թվականի գարնանից ի վեր ստանձնելով խորհրդարանի ղեկավարումը՝ օրենսդիր աշխատանքին զուգընթաց ձեռնամուխ էի եղել նաեւ Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքի բարեփոխմանը:

Իհարկե, ափսոսում եմ, որ չհասցրեցինք իրականացնել մեր բոլոր ծրագրերը: Իսկ արածի արդյունքներն արդեն տեսնում ենք եւ համոզվում, որ ընդունված որոշումները ճիշտ էին ու տեղին: Մասնավորապես, Ազգային ժողովի նախագահի խորհրդականների

ինստիտուտի պարզեցումը թույլ տվեց աշխատել անմիջապես Ազգային ժողովի աշխատակազմի տարբեր ստորաբաժանումների հետ ու բացահայտել եւ զարգացնել նրանց մասնագիտական մեծ հնարավորությունները: Եւ այսօր, օգտվելով առիթից, շնորհակալություն եմ հայտնում Ազգային ժողովի ողջ աշխատակազմին՝ բարեխիղճ եւ արիեստավարժ աշխատանքի համար:

Միաժամանակ, շնորհակալություն եմ հայտնում նաեւ մամուլին եւ խորհրդարանում հավատարմագրված բոլոր լրագրողներին: Նրանք այս ընթացքում բարձր մակարդակով իրականացրեցին մեր աշխատանքների անկողմնակալ ու օպերատիվ լուսաբանումը եւ ավելին՝ հաճախ մատնացույց արեցին հրատապ լուծում պահանջող տարբեր խնդիրներ ու ասես դարձան մեր օգնականներն ու խորհրդատուները:

Իսկ կառուցվածքային բարեփոխումների շրջագծում ամենամեծ ծրագիրն Ազգային ժողովի վերլուծական կենտրոնի ստեղծման նախաձեռնությունն էր: Մեր նպատակն էր ունենալ ընդունված օրենքների արդյունավետության մշտադիտարկման ապահովումը, վերլուծությունն ու գնահատումն իրականացնող, ինչպես նաեւ ցանկացած ասպարեզում միջազգային օրենսդրական փորձն ու ավանդույթները Հայաստանում կիրառելու հնարավորության վերաբերյալ հիմնավորված առաջարկներ ներկայացնող մարմին: Լիազորված եմ, որ ապագա խորհրդարանն ու նրա ղեկավարությունը հետանում կլինեն այս գրեթե ավարտուն նախաձեռնությունը վերջնականապես կյանքի կոչելուն:

Հարգելի՛ պատգամավորներ, սիրելի՛ հայրենակիցներ, ավարտելով խոսքս՝ պարզ ու անկեղծ ասում եմ՝ հետեյալը. իմ կյանքի ուղեկիցը միշտ եղել է պատասխանատվությունը: Այն կրել եմ, երբ պարզապես բժիշկ էի, բժշկական

կենտրոնի ղեկավար, առողջապահության նախարար եւ տասը տարի Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահ, անդամական ընկերս՝ պատասխանատվությունը, կրկին ինձ հետ էր ու վերահսկում էր ինձ:

Իսկ որպես Հայաստանի խորհրդարանի նախագահ՝ իմ պատասխանատվությունն ավելի է ընդգծվել:

Ըստ այդմ, երբ արդեն պարզ էր քաղաքական գործընթացների զարգացման տրամաբանությունը, առաջին հայացքից ամենաճիշտ եւ ընկալելի քայլը, որպես խորհրդարանում ներկայացված ամենամեծ քաղաքական ուժի ներկայացուցիչ՝ լինելու էր իմ հրաժարականը:

Բայց ընդհակառակը: Դարձյալ առաջնորդվել եմ նույն պատասխանատվությամբ, քանի որ կարծել եմ, որ իմ հրաժարականը կարող էր առաջացնել ավելորդ դժվարություններ:

Ի դեպ, Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն ուներ ինձ անվստահություն հայտնելու իրավունք: Շնորհակալություն եմ հայտնում բոլոր խմբակցություններին ցուցաբերած բարձր վստահության համար, ինչը կրկնապատկեց իմ պատասխանատվությունը: Սիրելի բարեկամներ,

չեմ թաքցնում, որ ափսոսանքով ու մտահոգությամբ եմ հետանալու՝ մտածելով, թե արդյո՞ք ավարտին եմ հասցվելու այն մտահոգումները, որոնք սկսել էի. օրենսդրական նախաձեռնություններ, միջազգային համագործակցություն, խորհրդարանական դիվանագիտություն, կառուցվածքային բարեփոխումներ եւ այլն: Հուսանք, որ ամեն ինչ լավ կլինի:

Հայաստանի Հանրապետության յոթերորդ գումարման խորհրդարանին մաղթում եմ օրինաստեղծ արդյունավետ աշխատանք եւ ամենակարեւորը՝ պատասխանատվությունը»:

Կապանի լեռնահարստանի կոմբինատը նոր սեփականատեր ունի

Ռուսական «Պոլիմետալ Ինթերնեյշնլ» հանքարդյունաբերող ընկերությունը (Polymetal International plc, գրանցված է օֆշորային Ջերսիում) համաձայնագիր է կնքել «Չաարատ Գոլդ Հոլդինգս» ընկերության (Chaarat Gold Holdings Limited) հետ «Կապանի լեռնահարստանի կոմբինատ» ՓԲԸ-ն վաճառելու վերաբերյալ: Վաճառքի գինը 55 միլիոն դոլար է: Այս մասին մեր հարցմանն ի պատասխան հայտնել է Կապանի լեռնահարստանի կոմբինատի գլխավոր տնօրենի հասարակայնության հետ կապերի եւ սոցիալական քաղաքականության գծով տեղակալ Վահրամ Ավագյանը:



ԼԷԿ-ի նոր սեփականատեր «Chaarat Gold Holdings Limited»-ին, ապա վերջինս գրանցված է Բրիտանական Վիրջինյան Կղզիներում: Ընկերության գործադիր տնօրեն Արտյոմ Վոլինցը գործարքի մասին ասել է. «Այս ձեռքբերումը «Չաարատի» պրոսֆեյթի հիանալի համալրում է եւ կխթանի մեր ռազմավարական նպատակը՝ կառուցել ոսկի արդյունահանող առաջատար, զարգացող ընկերություն»:



Ընկերության պաշտոնական կայքում եւս նշվում է, որ դրա նպատակը Կենտրոնական Ասիայում եւ հետխորհրդային տարածքում ոսկի

ռոյալթին, որը չպիտի գերազանցեր 25 մլն դոլարը: Հիշեցնենք, որ «Պոլիմետալը» Հայաստանում Կապանից բացի իրավունքներ ունի նաեւ Լիճքվազի հանքավայրի հանդեպ: Ինչ վերաբերում է Կապանի

փականատեր օֆշորային ընկերության անունն առկա է Հետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիումի (ICIJ) հրապարակած հայտնի թղթապանակներից մեկում՝ «Paradise Papers»-ում, որտեղ ներկայացված են «Չաարատի» որոշ կառուցվածքային մանրամասներ: Ըստ Paradise Papers-ի՝ «Chaarat Gold Holdings»-ը (CGH) նաեւ Մալթայում գրանցված «Chaarat Malta Limited»-ի համասեփականատեր է: Իր պաշտոնական կայքում «CGH»-ը հայտնում է Դրոլզատանում իր ակտիվի մասին: Այստեղ «CGH»-ը հիմնել է դուստր ձեռնարկություն՝ «Chaarat Zaav»: Ռուսական «Սպուտնիկի» դրոլզական ծառայությունն էլ այս տարվա ապրիլին տեղեկացրել է, որ «CGH»-ի գլխավոր ակտիվը Դրոլզատանի Ջալալ-Բադրի մարզի Չաարատ տեղամասն է, որտեղ ոսկու արդյունահանման ծրագիրը կյանքի կոչելու համար «CGH»-ը նախորդ տարի 15 մլն դոլար վարկ է վերցրել: «Սպուտնիկի» փոխանցմամբ՝ միջինասիական երկրում «Chaarat Zaav»-ը ստացել է 3 լիցենզիա՝ երկուսը՝ շահագործման, մեկը՝ հետախուզման: 2012թ. Դրոլզատանի այն ժամանակվա վարչապետ ժամտորո Սատիբալդինը խախտումների պատճառով պահանջել էր փակել «Chaarat Zaav» ընկերությունը, սակայն հետագայում ամեն ինչ ավարտվել էր 153 հազար տոն (մոտ 2200 դոլար) տուգանքով:

«Chaarat Gold Holdings»-ի տնօրենների խորհրդի նախագահը Մարտին Անդերսոնն է, ով ըստ ընկերության պաշտոնական կայքի, նաեւ «CGH»-ի ամենախոշոր բաժնետերն է (35,51 տոկոս):

Կապանի կոմբինատի նոր սեփականատերն է Կապանի

Ազգային ժողովն արձակված է իրավունքի ուժով

էջ 1
որ ինքը ռեյտինգային ընտրակարգով չի առաջադրվելու՝ «Համապետական թեկնածու եմ լինելու»:

Փաշինյանը վարչապետի պաշտոնում առաջադրված միակ թեկնածուն էր: Այս առաջադրումը, ինչպես եւ նախորդը, ֆորմալ բնույթ էր կրում:

Վարչապետի առաջադրված միակ թեկնածուին չընտրելու մասին հայտարարել էին Ազգային ժողովի բոլոր խմբակցությունները: Հանրապետականը նույնպես չխոչընդոտեց Փաշինյանի ծրագրերին:

Թեեւ նույնքերի 1-ի քվեարկությունից հետո խորհրդարանն իրավունքի ուժով դե ֆակտո արձակված է, բայց պատգամավորները կշարունակեն աշխատել: Սահմանադրության համաձայն, արտահերթ ընտրության դեպքում գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում է, իսկ նորինը՝ սկսվում խորհրդարանի կազմավորումից հետո երկրորդ երկուշաբթի հրավիրված առաջին նստաշրջանի բացման պահից:

Անցած տարվա ապրիլի 2-ին ընտրված խորհրդարանը հինգ տարվա փոխարեն մեկուկես տարուց մի փոքր ավելի աշխատեց:

Հորեքյանական գիտաժողով Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղում

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (Պոլիտեխնիկի) հիմնադրման 85-ամյակի կապակցությամբ գիտաժողովներ են կազմակերպվում: Երկուսը անցկացվել է մայրաքաղաքում. մեկը՝ մեքենաշինության, մյուսը՝ էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ոլորտներին առնչվող: Թվով երրորդն անցկացվեց հոկտեմբերի 25-27-ին մայր բուհի Կապանի մասնաճյուղում «Հանքարդյունաբերության արդիական հիմնախնդիրները» խորագրով: Գիտաժողովի աշխատանքին մասնակցում էին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) ռեկտոր Ռստանիկ Մարուխյանը, ՀԱՊՀ-ի գիտական աշխատանքների և գիտատեխնոլոգիական համագործակցության գծով պրոռեկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արեգ Գրիգորյանը, ընդերքաբանության և մետալուրգիայի ֆակուլտետի ղեկավար, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Ալբերտ Ֆրանգուլյանը, ֆակուլտետի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Հովհաննիսյանը, ընդերքաբանության և մետալուրգիայի բազային լաբորատորիայի գիտական ղեկավար, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Սուրեն Աղբալյանը, ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի դասախոսներ, ուսանողներ:

Հորեքյանական գիտաժողովը բացեց ՀԱՊՀ ռեկտոր Ռստանիկ Մարուխյանը: Ողջերթի խոսքում Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը կարեւորեց այն փաստը, որ գիտաժողովը կազմակերպվում է Կապանում, և մարզում գործող ՀԱՊՀ-ի մասնաճյուղն իր շուրջն է հավաքել գիտական աշխարհի այդքան ներկայացուցիչների, և պատահական չէ ընտրված գիտաժողովի թեման, քանզի Կապանը հիմնվել է կառուցվել է հանքարդյունաբերության շուրջ և նրա շնորհիվ, և այսօր էլ նրա գերակա ճյուղն հանքարդյունաբերությունն է: Բանախոսը նաեւ նկատեց, որ հանքարդյունաբերության ոլորտն իր հետ բերում է նաեւ ռիսկեր և վտանգներ, և համոզմունք հայտնեց, որ հանքարդյունաբերության ոլորտում շահագործման և նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ նվազագույնի կհասցվեն մարդկանց ու շրջակա միջավայրին հասցվող վնասները: Նաեւ հույս հայտնեց, որ նման ձեռնարկները կդառնան ավանդական, և մայրաքաղաքից դուրս պարբերաբար կկազմակերպվեն այդպիսի գիտաժողովներ մարզերի գիտակրթական կյանքին հաղորդելով թարմություն և աշխուժություն: Ելույթի ավարտին Սյունիքի մարզպետը շնորհակալություն հայտնեց նախաձեռնողներին և գիտաժողովի կազմակերպիչին:

Գիտաժողովի ընթացքում հնչեցին զեկուցումներ հանրապետության ընդերքօգտագործման համակարգի ոլորտի պետական կառավարման համակարգի կատարելագործման ուղիներին, լեռնահանքային կազմակերպություններում (ԶՊՍԿ ՓԲ ընկերության օրինակով) ներդրումային ռիսկին, Սյունիքում լեռնամետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրներին, ֆլուտացման գործընթացի մաթեմատիկական մոդելներին և հանքարդյունաբերության ոլորտի ավելի նեղ մասնագիտական հարցերին առնչվող: Ձեկուցումներից հետո բանախոսներին հարցեր էին ուղղվում, պարզաբանումներ տրվում:

Առաջին նիստի ավարտից հետո ՀԱՊՀ-ի ռեկտոր Ռստանիկ Մարուխյանի հետ ճեպագրույց ունեցանք (աշխատանքային այցով Արցախ էր մեկնում):

Ինչպե՞ս տեսաք բուհի Կապանի մասնաճյուղը, ի՞նչ խնդիրներ են ծառայած նրա առջև:

Մասնաճյուղի մասին կարող եմ հայտնել, որ փորձում ենք առաջնահերթ ուշադրություն դարձնել կրթության որակին: Մի բան կարող եմ հստակ ասել, որ այսօր այս հաստատությունում ընդերքաբանության ոլորտին վե-



րաբերող լաբորատորիաների կահավորումը, հագեցվածությունը որոշ դեպքերում նույնիսկ երեսնյան մի շարք լաբորատորիաների գերազանցում են: Համաշխարհային բանկի ծրագրով այստեղ ներդրված երկու-երեք լաբորատորիաները, որ վերաբերում են մետալուրգիային, հրաշալի սարքավորումներով են հագեցած:

Հիմնախնդիրների տեսակետից կնշեի այն, որ օրեցօր նվազում են դիմորդների թիվը: Մենք պետք է փնտրուք անենք, և առաջարկ եմ արել, որ մասնագիտությունների անվանացանկի որոշակի փոփոխություններ կատարենք: Օրինակ, պարտադիր չէ, որ մաս-

նաճյուղը հրաժարվի այն մասնագիտություններից, որոնց պատրաստումն ինքն ի գործ է իրականացնել: Կարող եմ լինել մասնագիտություններ, որոնց 1-ին և 2-րդ կուրսերում ուսուցումը կազմակերպվի այստեղ, իսկ վերջնական ուսուցումն ուղղակիորեն Երևանում: Սա հարցի շատ հաջող լուծման տարբերակ է: Մենք ժամանակին նման բան իրականացրել ենք ընդերքաբանության ոլորտի մասնագետներ պատրաստելու դեպքում:

Ըստ իս՝ Կապանի մասնաճյուղը դիմորդներով համալրումն ապահովվելու տեսակետից լուծում կարող է լինել ներմասնաճյուղային ավագ դպրոց ունենալը: Դրա հաջողված օրի-

նակն ունենք Վանաձորում և Գյումրիում, իսկ Երևանի ավագ դպրոցը շատ բարձր վարկանիշ ունի և շատ ու շատ խնդիրների հստակ պատասխան է տալիս: Այստեղ էլ կարելի է դիմել այդ քայլին. Սյունիքի մարզպետի հետ էլ այդ խնդրի շուրջ մտքեր փոխանակեցինք՝ մասնաճյուղի համար ավագ դպրոց ունենալ հենց մասնաճյուղի կազմում:

Այնուամենայնիվ, մայր բուհն ինչո՞վ կարող է օգտակար լինել իր զավակին:

Մայր բուհը միշտ էլ աջակցություն ցուցաբերում է, և պիտի հիշեցնեմ, որ մասնագիտական որոշ ուղղություններ Երևանի կրթահամալիրի դասախոսական կազմի միջոցով ուղղակիորեն կյանքի կոչվեցին այստեղ՝ մինչև համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի ձեւավորվելը: Մասնավորապես, շատ կցանկանայի, որ Կապանի մասնաճյուղում պատրաստեին ինֆորմատիկայի գծով ուսուցիչներ: Դրա համար պետք է ունենալ մանկավարժական կրթական ծրագրի մի ամբողջական բաղադրիչ: Ի դեպ, այդպիսի գաղափար կա, բայց դրա իրականացման համար, նախնառաջ համապատասխան լիցենզիա պիտի ունենանք: Նաեւ ասեմ, որ Հայաստանի ազգային ճարտարագիտական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմը երբեք չի զլացել իր աջակցությունը ցուցաբերել և գործուղումներով ու համապատասխան մոդուլների դասավանդմամբ՝ այցելություններով: Հենց այժմ ընդերքաբանության և մետալուրգիայի ֆակուլտետի ամբիոնի վարիչ Սառա Մկրտչյանը մինչև նոյեմբերի 2-ը այստեղ դասընթացներ պիտի վարի:

Չպիտի մոռանամք հեռաուսուցման հանգամանքը: Մայրաքաղաքում կարող եմ դասախոսությունը կարդալ, այստեղ ունենդրել: Ես առաջարկ եմ արել. այստեղի ուսանողը, որպեսզի շատ լավ ծանոթանա մայր բուհի հնարավորություններին, պարբերական փոխայցելություններ պիտի լինեն: Երեսնյան ձեռքբերումները վերջին երեք տարում շատ ակնառու են, պետք է այստեղի ուսանողին հաղորդակից դարձնենք:

Իսկ Կապանի մասնաճյուղի գիտական մտքի առումով ի՞նչ կասեք:

Անցյալ անգամ ասել եմ, այսօր էլ ցավոք պիտի կրկնեմ. այստեղի դասախոսները թեմատիկ հայտեր ներկայացրել են գիտության պետական կոմիտեի մրցանակաբաշխությանը, ցավոք, չեն շահել, բայց չի կարելի ասել, որ մարդիկ չեն զբաղվում գիտությամբ, այլապես որտեղից են այսքան գիտության թեկնածուներ հայտնվում:

Մայր բուհի ռեկտորից կուզե՞նք իմանալ, թե Կապանի մասնաճյուղն ապահովվա՞ծ է դասախոսական կադրերով:

Որոշ մասնագիտության գծով, այո: Օրինակ, ընդերքաբանության ոլորտում չորս-հինգ հոգի պաշտպանել են, այդ տեսակետից ապահովված ենք, բայց կա մասնագիտացում, որում մասնագետները մեկ-երկուսն են, ինչը բավարար չէ: Ընդհանրապես գիտական աստիճան ունեցող դասախոսներն այստեղ 44 տոկոս են կազմում: Կարծում եմ՝ պիտի ձգտեն մոտենալ Գյումրու մասնաճյուղին, որտեղ այդ ցուցանիշը գերազանցում է 65 տոկոսը: Մասնավաճ ուր դրա ռեալ հիմքերը կան:

Եվ այնուամենայնիվ, ո՞րն է մասնաճյուղի ամենամեծ օղակը:

Ամենամեծ օղակը. շատ վատ վիճակում է մասնաճյուղի հանրակացարանը, որ կարելի էր նպատակային օգտագործել: Ցավոք, այսօր ասացին, որ սեյսմիկ տեսակետից շենքը խնդիրներ ունի: Մյուսը՝ «Մորայլ» կառույցի կողքին, այդ հարմարավետ սենյակներում «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը նոր ծրագիր սկսի: Եթե հաջողվի այդ ծրագիրը սկսել, Կապանի մասնաճյուղը կունենա նույն տեխնոլոգիական կենտրոնը, ինչ որ ունենք Գյումրիում և Վանաձորում: Իսկ դա շատ լուրջ ներդրում կլինի ուսուցման որակի բարելավման գործում, ինչպես ավագ դպրոցի ներդրումը:

Խոսքի ազատության դեմ թափ առնող պայքարում Քաջարանի կոմբինատի ղեկավարներին օգնության է գալիս Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը

(ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Գագիկ Հարությունյանին)

Հարգելի պարոն Հարությունյան
Մենք հասցրել ենք պատշաճ մակարդակով ծանոթանալ Բարձրագույն դատական խորհրդի լիազորություններին՝ ամրագրված Սահմանադրության եւ Դատական օրենսգրքի մեջ:

Ուստի եւ գտնում ենք, որ մեր անանձնական ցավը, ինչն առիթ է դարձել սույն նամակի, պետք է մտահոգի նախեառաջ Բարձրագույն դատական խորհրդին:

Այլ կերպ ասած՝ ուրիշ ո՞ւմ, եթե ոչ Բարձրագույն դատական խորհրդին ու նրա նախագահին պիտի տեղյակ դարձնենք Երեւանի ընդհանուր իրավասության դատարանում մարզային մի լրատվամիջոցի դեմ մանրագործող կամայականության եւ հետապնդումների մասին: Մանավանդ որ Սահմանադրության հոդված 173-ում ամրագրված է՝ «Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների եւ դատավորների անկախությունը»:

Խոսքը «Սյունյաց երկիր» պարբերականի շուրջ խարդավանքների նոր փուլի մասին է:

Վերջին երկու տարում այդ լրատվամիջոցի ու նրա խմբագրի դեմ սյունիքյան իշխանություններն իրականացրին այնպիսի հալածանքներ ու հետապնդումներ, որ նույնիսկ մարդկային երեւակայության մեջ դժվար է տեղավորել: Ու միայն այն բանի համար, որ այդ թերթը (նաեւ syuniacyerkir.am կայքով) ազնվորեն, բարեխղճորեն, հետետողականորեն, ճշմարտացիորեն լուսաբանում է Սյունիքի առօրյան:

Եվ, տեսնելով ու համոզվելով, որ հնարավոր չէ կասեցնել լրատվամիջոցի ստեղծագործ ընթացքը, նոր ճակատ բացեցին թերթի դեմ քաղաքացիական հայցեր հարուցելով թերթի ու նրա խմբագրի դեմ:

Միայն վերջի երկու-երեք ամսում Հայաստանի թիվ 1 հարկատուի, հանրապետության խոշորագույն հանքարդյունաբերական ընկերության՝ Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի ղեկավարների կողմից ութ հայց է ներկայացվել «Սյունյաց երկիր»- ու նրա խմբագրի դեմ:

Առաջին հայացքից միգուցե եւ նորմալ վիճակ համարվի դա. իրավական պետություն է, մարդիկ դատական կարգով փորձում են պաշտպանել իրենց պատիվն ու արժանապատվությունը, սակայն...

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանում այդ գործերի շուրջ տեղի են ունենում տարօրինակ եւ կասկածելի, հաճախ՝ իրավական առումով անհեթեթ գարգացումներ, որոնք իրավական պետություն ասվածի հետ որեւէ աղերս չունեն, որոնք ավելի շատ միջնադարին բնորոշ տգիտության եւ ինկվիզիցիայի տպավորություն են թողնում, որոնք առերեսույթ ուժի եւ արծաթի գործության հանդեսի մասին են տարփողում:

Օրինակ, այդ գործերից մեկով (քաղաքացիական գործ թիվ ԵԴ/12118/02/18, դատավոր՝ Էդիկ Ավետիսյան) Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը կիրառել է հայցի ապահովման միջոց՝ Սյունիքի մարզում (Քաջարանի կոմբինատի տիրահոջակ ղեկավարներից մեկի մասով) դադարեցնելով ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի եւ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի գործողությունը, որի նախադեպը մեզ չհաջողվեց գտնել ո՛չ Հայաստանի երրորդ հանրապետության, ո՛չ ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայում:

Եվ իրավական խեղդատվությունները նշված քաղաքացիական գործերում այնքան շատ են ու այնքան արտառոց, որ որեւէ լրատվամիջոց, Հայաստանի որեւէ ողջախոս քաղաքացի լռելու իրավունք չունի, քանզի խոսքի ազատության դեմ պայքարի նման նախադեպերը վաղ թե ուշ հանրապետությունում կկիրառվեն մյուս լրատվամիջոցների դեմ նույնպես:

Այսօր խոսքը նշված հայցերից մեկի մասին է՝ քաղաքացիական գործ թիվ ԵԴ/12226/02/18, դատավոր՝ Արթուր Ստեփանյան:



Հոկտեմբերի 30-ին Երեւանի ընդհանուր իրավասության դատարանում այդ գործով տեղի է ունեցել առաջին նախնական դատական նիստը:

Հայցվորը «Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի 1-ին տեղակալ Նարեկ Ամբարյանն է:

Վեճի առարկան syuniacyerkir.am կայքում 2018թ. մայիսի 18-ին հրապարակված հոդվածն է՝ «Քաջարան. այսպես էլ ապրում ենք»:

Հայցվորը գործին լծվել է երկու ներկայացուցչով, եւ, որպես առաջին քայլ, նախնական դատական նիստում շրջափակման ենթարկվեց պատասխանողի միջնորդությունը՝ տեսածայնագրելու դատավարության ամբողջ ընթացքը:

Պատասխանողը ընդամենը նկատի էր ունեցել հատկապես սյունիքյան հանրության կողմից այդ ընկերության ղեկավարների հանդեպ առկա տարակուսանքներն ու հետաքրքրությունները, նաեւ այն հանգամանքը, որ վեճի առարկա հրապարակումը պայմանավորված է բացառապես հանրային գեղարվեստական շահով:

Այնուհետեւ, հայցվոր կողմը մեկ ժամ շարունակ համառորեն եւ առանց իրավական լուրջ հիմնավորումների պնդում էր, թե Նարեկ Ամբարյանի հայցի քննությունը պետք է տեղի ունենա դռնփակության պայմաններում:

Իհարկե, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 17-ը տեսակաւորում է սույն դատավարության նման ռեժիմ, եթե, իհարկե, դրա անհրաժեշտությունը լինի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նշված հոդվածի 2-րդ մասում ամրագրված է՝ «Դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առնչության գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաեւ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դռնփակ նիստում»:

Իրականում, սակայն, նշված պայմաններից եւ ոչ մեկը կապ չունի Նարեկ Ամբարյանի կարգավիճակի հետ:

Նախ՝ վեճի առարկա հոդվածում մեկ բառ անգամ չկա հայցվոր Նարեկ Ամբարյանի մասին:

Լրագրային հրապարակումը Քաջարան քաղաքում եւ Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատում տիրող բարքերի մասին է:

Մինչդեռ Նարեկ Ամբարյան հայցվորը սովորական մի գայտարբայտեր է, որ հին իշխանությունների հովանավորությամբ եկել է Քաջարանի կոմբինատ՝ փող աշխատելու, ինչը եւ անուն է հեթախային հաջողությամբ:

Հա, նրա «արժանիքներից» մեկն էլ այն է, որ եղբայրը ՀՀ դատախազությունում բարձր պաշտոն է զբաղեցնում:

Եվ չլինելով պատշաճ հայցվոր, որեւէ առնչություն չունենալով այդ հրապարակման հետ, նա փորձում է հերթական պաշտպանական պատրուցել Քաջարանի կոմբինատի համար, որպեսզի իր ու իր հովանավորների սյունիքյան ողիսականը հանկարծ նոր ճաքեր չտա:

Այդ հայցով եւ նշված միջնորդությամբ Նարեկ Ամբարյանը փորձում է նաեւ թաքցնել մնալ հանրությունից, ինչպես որ թաքցնված է մինչեւ հիմա:

Այդ հայցով ու նշված միջնորդությամբ Նարեկ Ամբարյանը փորձում է իր ներդրումն ունենալ ազատ խոսքի դեմ Սյունիքում հայտարարված պատերազմում, որովհետեւ նրա ու նրա հովանավորների սարսափի աղբյուրը նախեառաջ ազատ խոսքն է:

Հարգելի պարոն Հարությունյան

Այդ ամբողջ պատմության մեջ տարօրինակն այն է, որ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանն է լծվել Քաջարանի կոմբինատի շարափառ ղեկավարների պաշտպանության ամբարո գործին:

Մենք դատապարտում ենք այդ դատարանի եւ հատկապես դատավոր Արթուր Ստեփանյանի պահվածքը:

Մենք վերստին հիշեցնում ենք՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 17-ի 2-րդ մասում սահմանված պայմանները (դռնփակ դատական նիստ

գումարելու համար) ոչ մի կապ չունեն իբրեւ հայցվոր խաղացող Նարեկ Ամբարյանի կարգավիճակի հետ:

Եվ գիտե՞ք ինչն է զարմացնում. դատավորը մեզանից լավ գիտի այդ անձնավորության իրական կարգավիճակի մասին, բայց նա էլ, որքանով նկատեցինք, իր դերն է խաղում՝ չարաշահելով դատավորի լիազորությունները:

Թե ինչ որոշում կընդունի դատավոր Արթուր Ստեփանյանը դատաքննությունը դռնփակության ռեժիմով անցկացնելու վերաբերյալ միջնորդության մասին կիմանանք ս.թ. դեկտեմբերի 6-ին, երբ կրկին տեղի կունենա նախնական դատական նիստ...:

Հաջորդ հանգամանքի մասին, որ ոչ պակաս տարակուսելի է, եթե ոչ ողբալի:

Սույն քաղաքացիական գործով (եւ ընդհանրապես բոլոր այն հայցերով, որ Քաջարանի ղեկավարությունը հարուցել է ընդդեմ «Սյունյաց երկիր») հայցվորները դիմել են ոչ թե Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, այլ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, թեւ Սյունիքի մարզում են գտնվում «Սյունյաց երկիր» լրատվամիջոցը, Քաջարան քաղաքը, Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը, Սյունիքում են բնակվում պատասխանողները, ենթադրյալ տասնյակ վկաները:

Եվ, չնայած այդ իրողություններին, բոլոր գործերն էլ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանում են ընդունել վարույթ:

Կարելի է ասել՝ դա սպասված եւ պարզ վիճակ է՝ Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի ղեկավարները սարսափում են Սյունիքից եւ որպես օտարականներ համոզված են, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում այդ հայցերի քննության ժամանակ ոչ միայն չեն կարողանալու իրենց համար ցանկալի մակարդակով խաղեր տալ ու բեմադրություններ իրականացնել, այլ համոզված են, որ բազմաթիվ տեղաբնակներ կհավաքվեն դատարանի շուրջ եւ ուղղակիորեն (ներող եղեք) կթքեն իրենց երեսին:

Բայց... Ո՞ր մնաց օրենքը:

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը (այս դեպքում դատավոր Արթուր Ստեփանյանը) չարաշահել է իր պաշտոնական դիրքն ու դատարանի հայեցողական իրավունքը ծառայեցրել ինչ-որ Նարեկ Ամբարյանի ու նրա հովանավորների քիմքին, ովքեր, կրկնում ենք, եկել են Սյունիք, վայելում են Սյունիքի ընդերքի հարստությունը, բայց վախենում են եւ սյունեցիները, եւ Սյունիքի դատարանից, եւ ազատ խոսքից, եւ գործող օրենքներից:

Արթուր Ստեփանյան դատավորը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 21-ից վերցրել է այն, ինչ իրեն ու Նարեկ Ամբարյանին ձեռնտու է:

Տեսե՛ք ինչ է կատարվում:

syuniacyerkir.am կայքում հրապարակված վիճահարույց հոդվածը Քաջարան քաղաքի եւ Քաջարանի կոմբինատի մասին է, որոնք գտնվում են Սյունիքում:

Հրապարակման հեղինակը Սամվել Ալեքսանյանն է, ով բնակվում է Սյունիքում:

Հրապարակումը լույս է տեսել syuniacyerkir.am կայքում, որի գտնվելու վայրը նույնպես Սյունիքն է:

Գործով ենթադրվող վկաներն էլ (բոլորը) բնակվում են Սյունիքում:

Եվ ակնհայտ այդ հանգամանքները չտեսնելու տալով, Արթուր Ստեփանյան դատավորը գործը վարույթ է ընդունել Երեւանի ընդհանուր իրավասության դատարանում:

Իհարկե, syuniacyerkir.am կայքի նշված հրապարակման հետ, ինչպես նշեցինք, որեւէ աղերս չունի Նարեկ Ամբարյանը, նրա մասին մեկ հիշատակում անգամ չկա վեճի առարկա հրապարակման մեջ:

Ասել է թե՛ վեճի առարկա հրապարակման մասով Նարեկ Ամբարյանը հայցվոր լինելու որեւէ հիմք չունի, ինչը դարձյալ չի նկատել Արթուր Ստեփանյան դատավորը:

Բայց եթե նույնիսկ Նարեկ



Ռուբեն Զաքարյանը ուրնադակ է տվել Վահե Ա. Նզովյալին

2018թ. հոկտեմբերի 27-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Մուրադ Յովակիմյան) ուշագործված վճիռ է կայացրել «Պարտավորեցնել ՀՀ Սյունիքի մարզպետին՝ հինգ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքել «Դարբասի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2017թ. դեկտեմբերի 14-ին տեղի ունեցած մրցույթի արդյունքներով ընտրված տնօրեն Ռուբեն Վանուշի Զաքարյանի հետ:

Անվավեր ճանաչել ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի եւ «Դարբասի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում նշանակված Վարդիթեր Սանթրյանի միջև 2018թ. մայիսի 8-ին կնքված թիվ 11 աշխատանքային պայմանագիրը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանից հօգուտ Ռուբեն Վանուշի Զաքարյանի բռնագանձել 4000 (չորս հազար) ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճռված եւ բավարարված կայացրած հանձնարարական համաձայնագրի կազմած պետական տուրքի գումար:

Վճիռը կանոնավոր չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապահի հաշվին:

Վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճիռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում»:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի սույն վճիռն նախորդել է Ռուբեն Զաքարյանի դեմ ստորադատի մեղադրանքների, խարդախության մի մասը շարք, որ տեւել է մոտ տասը ամիս:

Սյունիքի երբեմնի մարզպետ Վահե Ա.-ի դարբասյան խաղերը հայտնի են հանրությանը, հայտնի են եղել նաեւ պետական ամենաբարձր ատյաններին, սակայն ոչ ոք չի փորձել կանգնեցնել կամայականությունների շեղումը:

Հայտնի է նաեւ Ռուբեն Զաքարյանի արժանապատիվ դիմադրությունը:

...2017թ. դեկտեմբերի 14-ին «Դարբասի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում տեղի է ունեցել մրցույթ տնօրենի թափուր պաշտոնի համար:

Քվեարկության արդյունքներով Ռուբեն Զաքարյանը ստացել է յոթ ձայն եւ ընտրվել դպրոցի տնօրեն: Դպրոցի խորհրդի որոշումը սահմանված ժամկետում եւ սահմանված կարգով ներկայացվել է տարածքային կառավարման մարմին՝ ընտրված գործադիր տնօրեն Ռուբեն Զաքարյանի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու համար:

Վահե Հակոբյանը ոչ միայն արհամարհել է մրցույթի արդյունքները եւ մրցույթի արդյունքների



վերաբերյալ դպրոցի խորհրդի որոշումը, այլեւ մի շարք ստոր բայլերի դիմել:

Մասնավորապես՝ առաջարկություն է ներկայացրել ՀՀ կրթության եւ գիտության նախարարին՝ Ռուբեն Զաքարյանի՝ ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) գործողությունը դադարեցնելու վերաբերյալ, որը նախարարությունում քննարկվել է ընդունվել:

Վահե Հակոբյանը Սյունիքի մարզի դատախազության եւ իր ստրուկ ատյանների օգնությամբ նյութեր է պատրաստել, թե իբր Ռուբեն Զաքարյանը (Շենթաղի դպրոցում) պաշտոնավարման ընթացքում ուսումնադաստիարակչական գործառնությունների հետ անհամատեղելի արարքներ է թույլ տվել (իբր դպրոցը գործել է առանց լիցենզիայի, խախտվել է պարտադիր կրթություն ստանալու աշակերտների իրավունքը, ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղը համարվել է առանց մրցույթի եւ այլն):

Եվ մոզմանով նյութերը մատուցվել են մարզի իրավապահ մարմիններին՝ Ռուբեն Զաքարյանի դեմ քրեական հետապնդում իրականացնելու համար:

Դարբասի տնօրենի աթոռի համար մղվող աննախադեպ ճակատամարտում Վահե Ա.-ն, իր քնահանդիսներին ընդառաջ գնալով, փոփոխություն է կատարել «Դարբասի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կազմում փորձելով ստեղծել կառավարման գրպանային մարմին, քանի որ խորհրդի նախկին կազմը գործում էր սեփական պատասխանատվության, դպրոցի արժանապատվության հստակ գիտակցումով:

Դա 2018-ի փետրվարին էր: Եվ զարմանալիորեն նորակազմ խորհրդի նախագահ է ընտրվել՝ Վարդան Իվանյանը (Լավինետի որդի Արթուրի տեղակալը), ում եղբայրը՝ Տիգրանը, մարզպետարանի ներքին աուդիտի ղեկավարն է եւ հանրությանը հայտնի է մարզպետի կամայականությունները հնազանդ

կատարելու վարպետությամբ: Վարդան Իվանյանի ղեկավարությամբ էլ 2018թ. մայիսի 3-ին անց է կացվել նոր մրցույթ՝ Դարբասի տնօրենի թափուր պաշտոնի համար՝ առանց Ռուբեն Զաքարյանի:

Ի դեպ, դա նույն Վարդան Իվանյանն է, ում եղբայր Տիգրանի գլխավորությամբ Սյունիքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժինը, Վահե Ա.-ի հանձնարարությամբ, Ռուբեն Զաքարյանի գլխավորած «Շենթաղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ստուգումներ է իրականացրել եւ քրեական գործ հարուցելու համար «նյութեր» պատրաստել: Բարեբախտաբար, բոլոր այդ ստորադատներն ու խարդախանքները ձախողվել են:

Ամոթալի այդ պատմության մեջ Վահե Ա.-ի մոռնալը չէր ջարդվի, եթե պետական ու իրավապահ մարմիններն արժանապատիվ է օրինավոր պահվածք չդրսեւորեին:

Նախ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Ա. Հարությունյանը 2018թ. հոկտեմբերի 8-ի գրությամբ Դարբասի դպրոցի տնօրենի թափուր տեղի համար անցկացված վիճակագրության մրցույթի (2017թ. դեկտեմբերի 14-ի) արդյունքները չէր չի ճանաչել:

Նախարարը չի դադարեցրել Ռուբեն Զաքարյանի՝ ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) գործողությունը՝ հիմքերի բացակայության պատճառով. այդ մասին, ինչպես նշեցինք, նախարարին դիմել էր Վահե Հակոբյանը:

Դրվատանքի արժանի է ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Սիսիանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Գրիգորյանի սկզբունքային ու օրինապահ վարքագիծը, ով կարծել է թիվ 52200118 քրեական գործի վարույթը հանցագործության դեպքի բացակայության հիմքով (այդ գործով քրեական հետապնդում էր սկսվել Ռուբեն Զաքարյանի դեմ):

Հիշեցնենք, որ Ռուբեն Զաքարյանը հաղթել էր նաեւ Դարբասի դպրոցի տնօրենի թափուր պաշտոն



նի համար առաջին մրցույթում եւս, որ տեղի է ունեցել 2017-ի սեպտեմբերի 11-ին:

Այդ ժամանակ էլ Վահե Ա.-ն թքել էր Հայաստանի Հանրապետության օրենքների վրա եւ հրաժարվել աշխատանքային պայմանագիր կնքել Ռուբեն Զաքարյանի հետ՝ գտնելով, որ հաղթողն իր մարդը չէ:

Հիմա, երբ ամեն ինչ հետեւում է մնացել, ուզում ենք գնահատանքի խոսք ուղղել նաեւ «Դարբասի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի նախկին նախագահ Ռոբերտ Խաչատրյանին՝ Վահեի ճնշումներին չենթարկվելու, իր հայրենի գյուղի արժանապատվության տեր կանգնելու համար:

Ափսոսում ենք, որ անտեղյակ լինելու պատճառով չենք մասնակցել նրա սիրելի հայրիկի հուղարկավորությանը: Ուստի եւ ուշացումով մեր խմբագրակազմի ցավակցությունն ենք հղում նրան:

Դարբասի դպրոցի տնօրենի ընտրության շուրջ տեղի ունեցած այս պատմության մեջ շատ հարցեր, միջնդեռ, մնում են անպատասխան ու չպարզաբանված:

Օրինակ, ի՞նչ դեր է խաղացել հորինված այդ խառնաշփոթի եւ քառսի մեջ մարզպետարանի կրթության վարչության պետ Սերի Գանդալյանը, չէ՞ որ ինքը պետք է (իր պաշտոնի բերումով) օրինախախտ մարզպետին սթափության կոչ աներ եւ կանգնեցրեր դպրոցի կողքին եւ ոչ թե հնազանդվեր մարզպետի կամքին:

Ի դեպ, զարմանալի հետքեր ենք տեսնում՝ կրթության վարչությունում այդ տիկնոջ պաշտոնավարումն մից հետո մարզի հանրակրթական դպրոցների գալի մասում առաջացած խառնաշփոթի մեջ:

Կարծում ենք, գոնե ուշացումով, պետք է հանգամանալից քննության ենթարկվեն բոլոր այն գործողությունները, որ կատարվել է հանրակրթության ոլորտում՝ այդ տիկնոջ պաշտոնավարման ժամանակաշրջանում (տնօրենների ազատում, տնօրենների նշանակում, խորհուրդների կազմի փոփոխություն, հանրակրթական դպրոցներ

րում կատարված ստուգումներ...):

Առանց հետադարձ հայացքի եւ առանց այդ ամենի մանրակրկիտ ուսումնասիրության ու օբյեկտիվ գնահատության՝ Սյունիքի մարզի հանրակրթական դպրոցների մասին խոսելն անլուրջ է եւ անհեռանկար:

Մի հարց էլ՝ Հայաստանի Հանրապետության ո՞ր օրենքի կամ ենթօրենսդրական ակտի համաձայն է մարզպետարանի կրթության վարչության պետը միջամտում ՊՈԱԿ-ի կարգավիճակ ունեցող հանրակրթական դպրոցների տարիֆիկացիաներին: Եվ ինչո՞ւ են հանրակրթական դպրոցի տնօրենները իրենց եւ կառավարման խորհուրդներին օրենքով վերապահված լիազորություններից կամովին հրաժարվում ու նվիրում կրթության վարչության պետին:

Ինչեւէ, շնորհավորում ենք Ռուբեն Զաքարյանին՝ հաղթանակի կապակցությամբ:

Ռուբեն Զաքարյանը Սյունիքի մարզի հանրակրթության երախտավորներից է, եւ նրան բարոյական տառապանք պատճառած չինովնիկները պետք է հրապարակավ ներողություն խնդրեն:

1992թ. ապրիլի 26-ից նա գլխավորել է Լեռնաշենի ութամյա դպրոցը, որ հետագայում կոչվել է «Շենթաղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ: Եվ այդ պաշտոնը վարել է արժանապատվորեն ու բարձր պատասխանատվությամբ, վարել է մինչեւ 2017թ. դեկտեմբերի 14-ը՝ մինչեւ նշված մրցույթում հաղթելը:

Հաջողություն Ռուբեն Զաքարյանին՝ Դարբասի կրթական ու դաստիարակչական լավագույն ավանդույթներով հարուստ դպրոցը ղեկավարելու գործում:

Հ.Գ. **Պաշտոնից հեռացվելուց հետո Վահե Հակոբյանը հաջորդաբար պարտվում է դատական բոլոր վեճերում:**

Վատահ ենք, որ պարտությունների այդ շեղումը շարունակվելու է առաջիկա մեկ-երկու տարում նույնպես, որովհետեւ նրա մարզպետական գործունեությանն առնչվող դատական հայցերն անթիվ են...

Բայց նրա կամայականությունների հետևանքով քաղաքացիներին հասցված ֆինանսական վնասը հատուցում է Սյունիքի մարզպետարանը, ասել է թե՛ պետությունը:

Օրենքը խախտել է ինքը, բայց վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ պետական բյուջեի հաշվին:

Դա էլ մի կողմ. բազմաթիվ սյունեցիների նյութական ու բարոյական տառապանքներ պատճառած անամոթն ինչպե՞ս է այդ ամենից հետո համարձակվում գալ Սյունիք եւ կանգնել վարչապետի ու մարզպետի կողքին:

Սամվել Ալեքսանյան

Քաջարանի կոմբինատում՝ լիցենզիայի խախտումներ

Վերջերս Քաջարանի կոմբինատի տնօրենությունը հայտարարել է, թե մտադիր է փակել Արծվանիկի պղնձաքարը մինչեւ շահագործման ժամկետի լրանալը, որին դեռ ութ տարի կա: Նաեւ հիշեցնենք, որ նախկին կառավարության օրոք գերակա շահ ճանաչվեց ու շուրջ 500 հա տարածք փոխհատուցման հիմունքով հատկացվեց Քաջարանի կոմբինատին՝ արդեն իսկ աշխարհի ամենամեծ պղնձ

չամբարների եռյակում տեղ զբաղեցնող Արծվանիկի պղնձաքարը մեծացնելու նպատակով: Քանզի մինչեւ օրս Վահե Հակոբյանն ու հարակից շրջանակներն իրենց գործելաճով ապացուցել են, որ հետաքրքրված են միայն իրենց շահերով, հարց է առաջանում, թե ի՞նչ է նման որոշման պատճառը: Հետադարձ հայացք զգենք իրադարձություններին:

Մաս առաջին: Լիցենզիայի գերազանցող արդյունահանում

2016թ. դեկտեմբերից Քաջարանի կոմբինատին թույլատրվել է օգտակար հանածոյի արդյունահանման ծավալները հասցնել 22 մլն տոննայի՝ նախկին 12.5 տոննայի փոխարեն: Միեւնույն ժամանակ ուսումնասիրում ենք վիճվարչության տվյալները եւ պարզում, որ 2012 թվականից սկսած տարեկան Քաջարանում թույլատրվածից ավելի արդյունահանվել է 5 մլն տոննա հանքաքար: Օգտվելով Ձանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատի անփոփ ֆինանսական հաշվետվությունից՝ կարելի է գնահատել, որ վերջին վեց տարում

լիցենզիայի խախտումով արդյունահանված 30 մլն տոննա օգտակար հանածոյի վերամշակումից կոմբինատը 400 մլն դոլար հավելյալ եկամուտ է ստացել: Անկախ այն բանից՝ այս ամենը որպես անփութություն, հանդգնություն, թե՛ անպատեղիություն կբնութագրվի, սա լիցենզիայի պայմանի կոպիտ խախտում է:

Մաս երկրորդ: Արդյունահանման ու վաճառքի անհամապատասխանություն

Արդյունահանման ծավալի այսպիսի աճի դեպքում ակնհայտ է, որ ֆերոմոլիբդենի արտահանման ծավալը պետք է եակնորեն աճի, բայց, օ՛, զարմանք:

Առողջ ապրելակերպ. ահա դեղատոմսը՝ ասում է Ռոժե Ռոզարիոն

Գորիսի «Ֆրանս- հայկական սրտանոթային կենտրոնում» այս տարվա հոկտեմբերի 21-27-ը հիվանդների ընդունելություն կատարեցին Ֆրանսիայից ժամանած բարձրակարգ բժիշկները: Նրանք կենտրոնում իրականացրին զոնդավորում, անհետաձգելի եւ պլանային ստենտավորումներ, ամեն օր 20 հիվանդի համար կազմակերպեցին կոնսուլտացիաներ եւ այլն: Մեկ շաբաթվա ընթացքում Ֆրանսիայից եկած, ինչպես նաեւ կենտրոնի բժիշկների համատեղ ուժերով կատարվեց սրտի 15 վիրահատություն: Ի դեպ, Ֆրանսիայից ժամանած բժիշկների պատճառով կենտրոնը դիմած հիվանդների թիվը բավականին մեծացել էր:

Ըստ կենտրոնի տնօրեն Սեւան Մատիկյանի՝ նման հոսքը բացատրվում է նրանով, որ հիվանդները վստահել են նրանց, հավատացել նրանց ուժերին: Իսկ արտերկրից ժամանած բժիշկներն արդարացրել են հիվանդների վստահությունը. այդ է վկայում վերջիններիս արագ ապաքինումը:


Ֆրանսիայից ժամանած բժիշկներից Ռոժե Ռոզարիոն, ով Մարսել քաղաքի Սեն-ժոզեֆ հիվանդանոցի կարդիոռեանիմատոլոգն է, շատ մեծ կարծիք ունի կենտրոնի բժիշկներ Կարեն եւ Խաչիկ Համբարձումյանների մասին:

- Նրանք լավ վերապատրաստված են, միջազգային ստանդարտներին համապատասխան են կատարում զոնդավորումները եւ ստենտավորումները: Սովորաբար, զոնդավորումն ու ստենտավորումը կատարվում են երկու եղանակով՝ ոտքից եւ ձեռքից: Նրանք դա կատարում են ձեռքից, որն ավելի դժվար է: Նրանք այդպես են անում ի շահ հիվանդի, եվրոպայում էլ են այդպես անում, դա անվտանգ է հիվանդի համար, ցավը քիչ է: Այսինքն, նրանք աշխատում են՝ առաջնայինը համարելով հիվանդի շահը եւ ոչ թե այն մեթոդով, որն ավելի հեշտ է բժշկի համար:

Ինչ վերաբերում է կենտրոնի տեխնիկական վերազինմանը, պետք է խոստովանել, որ այն հագեցած է ժամանակակից բուժտեխնիկայով: Ժամանակակից բուժտեխնիկա գումարած բարձրակարգ բուժանձնակազմ. ահա այն գումարելիները, որոնց շնորհիվ Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերի բնակիչները ստանում են բարձրակարգ բուժապասարկում: Օգտվելով առիթից՝ ուզում են ասել՝ սիրելի բարեկամ ժողովուրդ, ճիշտ ապրելակերպ վարեք, այն ձեզ կփրկի սրտանոթային հիվանդություններից, որովհետեւ ավելի հեշտ է կանխարգելել հիվանդությունները, քան բուժել դրանք: Այսինքն՝ մի ծխեք, զբաղվեք սպորտով: Օրինակ, ես իմ օրը սկսում եմ վազելով:

Այս կենտրոնը Ֆրանսիայի մի մասնիկն է Գորիսում, մենք հաճույքով աշխատեցինք եւ այստեղից մեկնում ենք հաճելի տպավորություններով ու հիշողություններով: Եվ հիշեք՝ մարդու համար ամենաթանկն առողջությունն է, այն չես կարող զնել, բայց կարող ես պահպանել առողջ ապրելակերպի շնորհիվ:

Ալվարո Մերոյայան



Գորիս համայնքի ավագանու անդամների հայտարարությունը

Հոկտեմբերի 25-ին մայրաքաղաքային կայքերից մեկը տարածել է հոդված՝ «Ադմ-կահարույց միջադեպ Գորիսի համայնքապետարանում. քաղաքապետ Առուշանյանը ծեծել է ավագանու անդամին» վերտառությամբ:

Ըստ այդ հրապարակման՝ համայնքի դեկավար Առուշ Առուշանյանը հոկտեմբերի 18-ին, ավագանու անդամների ներկայությամբ, ծեծել է ավագանու անդամ Լյովա Արզանյանին: Եվ իբր միջադեպին նախորդել է վիճաբանություն Ներքին խնձորեսկի խնդիրների, ինչպես եւ համայնքում վաճառված հողերի շուրջ:

Մենք՝ ավագանու անդամներս, որ մասնակից ենք եղել ավագանու հոկտեմբերի 18-ի նիստին, հայտարարում ենք՝ լրատվամիջոցի այդ հրապարակումն ամբողջապես ապատեղեկատվություն է եւ չի համապատասխանում իրականությանը:

Ավելին, այն միտված է Գորիսի համայնքապետի եւ համայնքի ավագանու վարկաբեկմանը, որը դատապարտում ենք եւ անթույլատրելի համարում:

Փառք Աստծո, Գորիս համայնքի ավագանին ունի այնքան հեղինակություն, արժանապատվության այնպիսի զգացում, պատասխանատվության այնպիսի գիտակցում, որ որեւէ մեկը չի հանդգնի ձեռք բարձրացնել ավագանու անդամի վրա, որ թույլ չի տա ավագանու անդամի եւ համայնքապետի միջեւ աշխատանքային բանավեճն անցնի պատշաճության սահմանները:

Գորիս համայնքի ավագանու նիստերը սո-

Ավագանու անդամ Լյովա Արզանյանի արձագանքը

Սիրելի հայրենակիցներ, Գորիս համայնքի բնակիչներ, վերջերս սոցցանցերում եւ լրատվական կայքերում ստահող տեղեկություններ տարածվեցին այն մասին, թե իբրեւ ես տեղե-

կություններ եմ հայտնել ոստիկանություն, որ ինձ մարմնական վնասվածքներ են հասցրել. չի համապատասխանում իրականությանը, չի եղել նման բան, հայտարարում եմ ամենայն պատասխանատվությամբ:

Հարգանքով՝ Լյովա Արզանյան:



վորաբար անցնում են օրակարգային հարցերի ակտիվ քննարկման, կարծիքների ազատ փոխանակման, սկզբունքների քաղաքակիրթ բախման պայմաններում:

Հոկտեմբերի 18-ի նիստը նույնպես անցել է նման մթնոլորտում:

Համայնքի մեջ միավորված բնակավայրերում այնքան շատ են հիմնախնդիրները, որոնք, բնականաբար, ավագանու անդամնե-

րի ուշադրությունից չեն վրիպում եւ շահագրգիռ քննարկումների տեղիք են տալիս, ինչը դրվատելի է, այլապես անհնարին կլինի համայնքի առջեւ ծառայած խնդիրների փոքրիշատե լուծումը:

Եվ Ներքին խնձորեսկի, նաեւ համայնքի մյուս բնակավայրերի խնդիրները բոլորիս հոգան են:

Զրպարտություն է ոչ միայն ծեծկռուտի մասին տեղեկատվությունը, այլեւ պնդումը, թե

իբր վեճի պատճառ են եղել (Ներքին խնձորեսկի հիմնախնդիրներից գատ) Գորիս համայնքում վաճառված հողերը, ինչպես եւ այդ հողերը համայնքապետի մտերիմներին վաճառելու հանգամանքը:

Մենք չունենք որեւէ փաստ, որ համայնքապետն իր բարեկամներին հող է վաճառել: Զուրենք օրինակ, որ համայնքի հողերի տնօրինման հարցում համայնքապետը շրջանցել է գործող օրենսդրությունը եւ կամայականություն դրսևորել:

Ընդհակառակը՝ եւ համայնքապետը, եւ ավագանին շահագրգռված են, որ համայնքի չօգտագործվող հողերն ի վերջո օգտագործվեն համայնքի բնակիչների կողմից:

Եվ այդ միտումով քանիցս կոչ ենք հղել բնակչությանը:


Ահա իրականությունը, որ հարկ համարեցինք ներկայացնել հանրությանը՝ իբրեւ արձագանք հորինված ու ստահող հրապարակման:

Եվ, օգտվելով առիթից, հորդորում ենք Գորիս համայնքով հետաքրքրված անձանց՝ ոչ մի դեպքում չզնայ ապատեղեկատվության տարածման եւ համայնքի միասնության վերականգմանը միտված ջանքերին խոչընդոտելու ճանապարհով:

Նարեկ Օրոյան, Արմեն Մկրտչյան, Էրիկ Աղաջանյան, Միեր Արզումանյան, Դավիթ Դոլունց, Սամվել Մաքունց, Մասիս Դեւոնդյան, Ռսկան Ռսկանյան, Գուրգեն Հակոբյան, Կարեն Լազարյան, Արարատ Աղաբեկյան

27 հոկտեմբերի 2018թ.

Ոգու այրող ուժը



Ջերմուկցի բանաստեղծ Վարդգես Խանոյանը նոր անուն չէ հայ գրական դաշտում: Ծնվել է եղեգնաձորի շրջանի Շատին գյուղում 1949 թվականին: Հայրենի գյուղում ստանալով միջնակարգ կրթություն՝ տեղափոխվել է գեղատեսիլ Ջերմուկ քաղաք: Մինչ օրս լույս էին տեսել նրա երեք ժողովածուները՝ «Հրաշալի քաղաքացին», «Արևի ծայն», «Քաջերը մահ չունեն» (արձակ): Եվ հաղորդակցությունները Խանոյանը

նի բանաստեղծությունների նոր գիրքը՝ «Թախծի ծառ» անչափ խորհրդանշական խորագրով: Սույնի մեջ ընդգրկված են վայրցձորի ճանաչված բանաստեղծի անցած գրական երկարամյա ճանապարհի լավագույն գործերը: Այս գրքով էս Վարդգես Խանոյանը գեղեցիկ պատկերավոր խոսքով հիմնավորապես փաստարկում է, որ ինքը բանաստեղծ է ծնվել բնության մի վերին խորհրդով՝ կամոքն Աստուծո: Նա բնավ ճիգեր չի գործադրում բանաստեղծ երեսալու համար: Նրա տողերը գտարյուն բանաստեղծական պատկերներ են՝ խորհմաստ ու խորաքանակ, խտացված կենսահյուսված լեզուն: Վարդգես Խանոյան բանաստեղծը սույն գրքով մեջբերում է հայրենի վայրցձորյան բնաշխարհի վեհությունը, նրա մարդկանց ապրումների եւ հույզերի խորին փիլիսոփայությունը, անկեղծ հուզականությունն ու դրամատիկը: Այնուամենայնիվ, նրա քնարերգության էջերում գերիշխողը խաղաղ գրույցն է, խաղաղ երգն ու ասքը: Այդ խաղաղ ընթացքին անկեղծորեն ու աննկատ միախառնվում են խոսքի հանդիսավորությունը, ոգու պարետիկան: Վարդգես Խանոյանը խոսում է պատկերներով եւ ոգով միաժամանակ: Ոգին խոսում է պատկերով, պատկերը թեժացնում, բորբոքում է ոգու կրակը: Սա իսկական բանաստեղծին բնորոշ հատկանիշ է, բանաստեղծական ճշմարիտ հասունության եւ վարպետության գրավականն ու առիվավատյան: Նրա յուրաքանչյուր բանաստեղծություն պատկերավոր եւ պատկերաքանակ համեմատությունների գեղեցիկ փունջ է՝ լցված սիրով, ծիածանի երփներանգ գույներով, հույսի

բեղմնով, հավատի կենսունակ լիցքերով: Միայն այդպիսի հատկանիշների տեր բանաստեղծի գրիչը կարող էր արձանագրել .

**Այս ծաղիկները ,
Այս ծաղիկները ,
Որ ելնում են հողի սրտից ,
Տաք կարոտներ են
Հավերժող սեր են ,
Մորս շշուկներն հաղորդում ինձ:**

Վարդգես Խանոյանը չի գնում տրորված, հաշմված ճանապարհներով, այլ փորձում է գտնել բանաստեղծական ուրույն այն արահետը, որն այսուհետեւ լույս էր բերում է պատկանելու: Հենց այդ՝ գուտ խանոյանական արահետներով է շարժվում բանաստեղծը՝ ստեղծելով գունագեղ, ինքնատիպ բանաստեղծական շարքեր հուզավառ երգերը: Բանաստեղծը երգեր է հնչեցնում իր ծննդավայր-բնօրրանի՝ անմահ Վայոց ձորի պատվին, փառաբանում հայրենի եզերքի շքալուսազարդ ու արեազարդ գարուններն ու աշունները : Տարվա բանաստեղծական ժպիտներն են արտացոլվում նրա տողերում: Ահա «Ջերմուկի գարունը» երգերով մեզ հետ այսպես է խոսում բանաստեղծը.

**Ջրվեժի ճիչը դառնում է երգ,
Եվ փրփրում է Արփա գետը,
Եվ ծիածանով ծաղիկների
Ձգվում է գարնան արահետը:
Ժայռերի վրա ծանրաբարձ
Օրը դնում է մամռոտ խալեր,
Եվ գարունացած երազներս
Թռչում են անվերջ սարերն ի վեր...**

Վարդգես Խանոյանը բանաստեղծական վեհառատ հիմներ է ծոնել հայոց հայրենիքին, մեր երկրի մշակութային օրհաններին՝ Հանրապետության Հայրենիքին, պատանի նահատակ բանաստեղծ Աղվան Մինասյանին, Արցախ աշխարհի ծնունդ, գրող, գրականագետ Սուրբատ Խանյանին: «Հայաստան» խորագրով այս գողտրիկ երգի մեղեդիներում մեր հիմնավոր ու նորոգ պատմության խորհուրդն է ամբարված.

**Իմ մտածումների հեռու կանչները
թրթում են ահա
մագաղաթները՝**

**արցունքներիս շարված բազմակետերով՝
կույրի այբուբենով...
Ու շարժվում են վրան մատներիս ծայրերը,
աչքերիս մեջ , սակայն ,
արեւը...
Գուցե կես-այբուբեն չէ ,
այլ տառերիդ սրտազարկերը...**

«Թախծի ծաղիկ» ժողովածուն կրկին անգամ վկայում է, որ Վարդգես Խանոյանն ինքնատիպ բանաստեղծական աշխարհ ունեցող ստեղծագործող անհատ է, եւ նրա երգերն ուրույն գույներով եւ երանգներով շարունակում են հարստացնել հայրենի Վայոց ձորի եւ Հայաստան երկրի հոգեւոր կենսագրությունը :

**Արմեն Կարապետյան
պատմաբան, բանաստեղծ,
հրապարակագիր**

Քաջարանի կոմբինատում՝ լիցենզիայի խախտումներ



Սիեր Պոլոսկով, «ՀՊՄԿ» ՓԲԸ տնօրեն

Էջ 6
Իրականում խոսքը միանգամայն շեղվում է տրամաբանությունից, արտահանման ծավալների մասին անհրաժեշտ ինֆորմացիան ստանում ենք ՄԱԿ-ի հրապարակած տվյալներից, քանի որ կոմբինատը, օրենքը խախտելով, չի հրապարակում ամբողջական ֆինանսական հաշվետվությունները: Համաձայն դրանց՝ 2017թ. արտահանման ծավալները մնացել են նույն մակարդակի վրա, մինչդեռ օգտակար հանածոների արդյունահանման ծավալն աճել է 40 տոկոսով: Ինչպե՞ս կարող է արդյունահանման ծավալն էականորեն աճել՝ առանց արտահանման ծավալի

աճի, հատկապես որ, ըստ տարածված լուրերի, կոմբինատը վերջին շրջանում անխնա կերպով արդյունահանում է հանքի միայն «երակ» կոչվող հատվածները: Պատասխանը միանշանակ է՝ հնարավոր չէ: Այս ամենին միայն տրամաբանական բացատրություն կա. արտադրանքի մի մասը վաճառվում է առանց գրանցման: **Մաս երրորդ: Պոչամբարի լցվելու հանելուկը** 2016թ. դեկտեմբերին հրապարակված ՇՄԱԳ-ի եզրակացության համաձայն՝ Արծվանիկի պոչամբարն իբր թե դեռ տաքը տարվա շահագործման պոտենցիալ ուներ, իսկ 1.5 տարի անց տնօրինու-

թյունն արդեն խոսում է պոչամբարը շուտափույթ փակելու մասին՝ չեղարկելով պոչամբարի մեծացման իր իսկ նախագիծը: Մի՞թե սա չի նշանակում, որ արդյունահանման իրական ծավալները շատ ավելի շատ են եղել նույնիսկ հրապարակվածից: Կամ էլ ՇՄԱԳ-ն ի սկզբանե չի համապատասխանել իրականությանը:

Վերջաբանի փոխարեն
Միգուցե հենց հանքի գերշահագործման հետքերը կամ ապօրինի իրացումը կոծկելու համար է տնօրինությունը փակում պոչամբարը, քանի որ ասում են՝ երկրում իրավիճակ է փոխվել:

Այսպիսով ամփոփենք՝
1. **գրանցվել են լիցենզիայի խախտում՝ թույլատրվածից ավելի օգտակար հանածո արդյունահանելու վերաբերյալ,**
2. **Քրեական օրենսգրքի խախտման հիմնավոր կասկածներ ֆերոնիլիթի վերաբերյալ,**
3. **Քրեական օրենսգրքի խախտման հիմնավոր կասկածներ շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործության վերաբերյալ:**
Արթուր Օրբելյանի «Յուրայան» էջից

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի ֆիզիկոսության դեկանի (0.5 դրույթ) եւ գինվորական դեկանի (0.5 դրույթ) թափուր տեղերի համար: Աշխատավարձը՝ համաձայն հաստատված հաստատագրի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնագրով պետք է ներկայացնում՝
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է,
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը գբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ դեկտեմբերի 3-ը ներառյալ, աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-ից 17:00-ը:
Փաստաթղթերի ընդունումը եւ մրցույթը կանցկացվի՝ ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 7-ին ժամը 14:30-ին, Կապանի պետական բժշկական քոլեջում, հասցեն՝ ք. Կապան, Շահումյան 37ա:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 5-25-70 կամ 093-97-24-92 հեռախոսահամարներով:

ԿԱՊԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՒՆՋԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2018-2019 ՈՒՏՏԱՐՎԱԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ՝

«Պեղագործություն» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

Ուսման տեւողությունը 3 տարի է: Ուսումնառությունն իրականացվում է միայն վճարովի հիմունքներով: Քոլեջ կարող են դիմել միջնակարգ կրթություն, միջին մասնագիտական եւ բարձրագույն կրթություն ունեցող անձինք: Քոլեջում ընդունելությունն իրականացվում է «Կենսաբանություն» առարկայի ընդունելության քննության արդյունքների հիման վրա:
Քոլեջում դիմորդի փաստաթղթերն ընդունվում են մինչեւ նոյեմբերի 20-ը, աշխատանքային օրերին, ժամը 9.00-ից 16.00:
Դիմորդն ընդունող հանձնաժողովին անձամբ ներկայացնում է հետեւյալ փաստաթղթերը.
- դիմում,
- կրթության մասին փաստաթուղթ,
- 4 լուսանկար (3x4 չափի),
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր

կամ գինվորական գրքույկ կամ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կամ կացության վկայական, կամ փախստականի վկայական),
- տեղեկանք առողջական վիճակի մասին (ծեւ N 086/ու(),
- տեղեկանք բնակատեղից,
- կցագրման վկայական (զին. կոմիսարիատից),
- արտոնության իրավունքը հաստատող փաստաթուղթ (եթե առկա է)
- տեղեկանք աշխատանքի վայրից (առկայության դեպքում):
Ընդունելության կազմակերպման ու անցկացման համար դիմորդը նախապես վճարում է 1000 դրամ:
Ուսման վճարը մեկ տարվա համար կազմում է 180 հազար դրամ:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել քոլեջի ընդունող հանձնաժողով:
**ՀԱՍՑԵՆ՝ ք. Կապան, Շահումյան 37ա:
ՀԵՌԱԽՈՒՆԵՐ՝ 5-25-70, 094- 45 - 99 - 36**

Մյուսյաց Երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻԶ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱԳՎԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽԱՐՔԱԳԻՐ՝
ՍՍՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խնդրվում է հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Մյուսյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01U 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 06.11.2018թ.: